ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/3299-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի (Պ-989-20.12.2024-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 87-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչություն
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-989-20.12.2024-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է՝

1. «**Ոստիկանության մասին**» **օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին**» **օրենքի նախագիծ (այսուհետ՝ նախագիծ)՝**

1) Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պահանջը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը, առաջարկում ենք նախագծի վերնագրում «փոփոխություններ և լրացում» բառերը փոխարինել «փոփոխություն և լրացումներ» բառերով: Միաժամանակ, նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «բառերը և կետադրական նշանները,» բառերն առաջարկում ենք փոխարինել «բառերը,» բառով՝ տվյալ դրույթով ամրագրված իրավակարգավորումն օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխանեցնելու նպատակով: Բացի այդ, նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում առկա «6-րդ և 7-րդ կետերով» բառերն առաջարկվում է փոխարինել «6-րդ կետով» բառերով՝ հաշվի առնելով, որ նախագծի նշված հոդվածում 7-րդ կետ առկա չէ:

2) «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի համաձայն՝ ծառայությունն իրականացնում է արտաքին

հետախուզական գործունեություն, որն ուղղված է արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության պաշտպանությանը, Հայաստանի Հանրապետության կենսական շահերին առնչվող տեղեկատվություն ստանալուն և մշակելուն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենսական համարվող ոլորտներում պետական քաղաքականության իրականացմանն աջակցելուն: Արտաքին հետախուզական գործունեությունը հիմնված է աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնիության վրա: Իսկ էլեկտրոնային կամ տեսանկարահանող համակարգերին հասանելիության տրամադրումը կարող է որոշակի կողմնակի ռիսկեր պարունակել Արտաքին հետախուզության ծառայության համար՝ վտանգելով անձնակազմի, ենթակառուցվածքների և գործունեության գաղտնիությունը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների շինությունների տեսահսկման համակարգերի տվյալներն իրենց համակցության մեջ կարող են պարունակել հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներին առնչվող տարաբնույթ տեղեկություններ: Ընդ որում, առցանց ռեժիմով հասանելության դեպքում տեսահսկման համակարգերի դիրքը, անկյունները, տեսանելիության հեռավորությունը, հնարավոր կույր կետերը, տեխնիկական այլ հնարավորությունների և ամբողջ ֆունկցիոնալի կենտրոնացումը մեկ մարմնում կարող է թիրախ դառնալ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, ինչպես նաև՝ առանձին անձանց կողմից Հայաստանի Հանրապետության դեմ իրականացվող հետախուզական և այլ քայքայիչ գործունեության համար:

Միաժամանակ, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներից բխում է, որ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը պետական պահպանությունը, այն է՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պահպանվող օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթը, իրականացնում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցության հիման վրա՝ գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների կիրառման համակցության սկզբունքով: Տեխնիկական միջոցառումները, ի թիվս այլ միջոցների, իրականացվում են նաև տեսահսկման միջոցով: Այս համատեքստում, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության բոլոր տեսանկարահանող

սարքերի տեսագրություններին հասանելիության տրամադրումը կարող է հանգեցնել գործունեության գաղտնի մեթոդների ու միջոցների բացահայտման, ինչը կարող է սպառնալիք հանդիսանալ թե՛ պետական պահպանության օբյեկտների անվտանգությանը, թե՛ պահպանվող օբյեկտների պաշտպանությանը:

Նշված անվտանգային խնդիրներն առկա են նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության տեսահսկման համակարգերի պարագայում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով բացառություն նախատեսել Արտաքին հետախուզության ծառայության և Պաշտպանության նախարարության կողմից վերահսկվող տեսահսկման համակարգերին հասանելիություն ունենալու մասով՝ բացառելով նշված մարմինների տեսանկարահանող սարքերին հասանելիության ապահովումը: Միաժամանակ, առաջարկում ենք նախագիծը խմբագրել այն տրամաբանությամբ, որպեսզի Պետական պահպանության ծառայության կողմից հասանելիություն ապահովվի միայն Պետական պահպանության ծառայության՝ փողոցներում և փողոցների խաչմերուկներում տեղադրված տեսահսկման համակարգերին, իսկ Ազգային անվտանգության ծառայության կողմից՝ միայն պետական սահմանի անցման կետերում տեղադրված տեսահսկման համակարգերին:

3) Նախագծով նախատեսված՝ «Ոստիկանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող 4-րդ կետում գործածվում է «պետական կառավարման համակարգի մարմիններ» եզրույթը, որը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի համաձայն՝ ավելի նեղ հասկացություն է, քան «պետական մարմին» եզրույթը: Այսպես, պետական կառավարման համակարգի մարմինների կազմում չեն ընդգրկվում քննչական կոմիտեն, հակակոռուպցիոն կոմիտեն, դատախազությունը, դատարանները, անկախ և ինքնավար մարմինները և այլն:

Հաշվի առնելով նախագծի մշակման նպատակները և հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծում «պետական կառավարման համակարգի մարմիններ» բառերը փոխարինել «պետական մարմիններ» բառերով:

4) Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ը» ենթակետի համաձայն՝ տեսահսկման համակարգերի միջոցով տվյալների մշակումը կարող է իրականացվել նաև օրենքով չարգելված նպատակներով պետական և ոչ պետական կազմակերպություններին վճարովի հիմունքներով անհրաժեշտ վերլուծական տվյալների տրամադրման նպատակներով:

Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի

համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ, իսկ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ ԱՏՊ մասին օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ նախագծի վերոնշյալ կարգավորումն անհրաժեշտ է դիտարկել նաև ԱՏՊ մասին օրենք 4-րդ հոդվածով նախատեսված անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքի տեսանկյունից: Մասնավորապես, օրինականության սկզբունքի համաձայն, ցանկացած անձնական տվյալի մշակում պետք է իրականացվի օրինական (օրենքով սահմանված կամ իրավունքին չհակասող, ոչ հանցավոր) և որոշակի (կոնկրետ, հստակ ձևակերպված, ոչ ընդհանուր բնույթի) նպատակներով: Նշված կարգավորումներին համապատասխանելու համատեքստում առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով լրացվող 6-րդ կետի «ը» ենթակետում ամրագրել, որ համապատասխան տվյալները պետական և ոչ պետական կազմակերպություններին կարող են փոխանցվել միայն ապանձնավորված եղանակով: Ապանձնավորման դեպքում առկա չի լինելու անձնական տվյալների փոխանցում և ըստ այդմ՝ ԱՏՊ մասին օրենքը, այդ թվում՝ օրինականության սկզբունքը, կիրառելի չի լինի ապանձնավորված տվյալների փոխանցման նկատմամբ:

Բացի այդ, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով լրացվող 6-րդ կետի «ը» ենթակետը, պետական կազմակերպությունների իմաստով, դիտարկել Սահմանադրության 6-րդ հոդվածի համատեքստում՝ քննարկման առարկա դարձնելով պետական կազմակերպությունների համար ոչ թե օրենքով չարգելված, այլ՝ օրենքով սահմանված լինելու պայմանը:

5) Նախագծի 2-րդ հոդվածով «Ոստիկանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասում լրացվող դրույթն առաջարկում ենք պարզեցնել և ձևակերպել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջի հաշվառմամբ: Ըստ այդմ, 5-րդ մասում լրացվող դրույթն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Սույն հոդվածով նախատեսված տեսագրություններ պահանջելը և ստանալը, տեսահսկման համակարգերին հասանելիությունը, տեսահսկման համակարգերի միջոցով

տվյալների մշակումը և տեսահսկման համակարգերի կիրառումը կարող են իրականացվել բացառապես սույն հոդվածով նախատեսված նպատակներով և այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն չափով:»:

6) Հաշվի առնելով, որ նշված նախագծերով նախատեսված իրավակարգավորումների արդյունքում տեղի է ունենալու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, նրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների տեսահսկման համակարգերի միասնականացում, ուստի անձնական տվյալների պաշտպանությունը բավարար չափով ապահովելու նպատակով առաջարկում ենք նախագծով նախատեսել անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված կազմակերպչական միջոցառումների վերաբերյալ կարգավորումներ (օրինակ՝ միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած կազմակերպչական միջոցառումներից է համապատասխան աշխատակիցների (ծառայողների) կողմից տեսահսկման միասնական համակարգին մուտք գործելու յուրաքանչյուր դեպքի արձանագրումը): Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նախագծի մշակման նպատակները՝ առաջարկում ենք՝

ա. նախագծով նախատեսել տեսահսկման համակարգերին մուտք գործելու իրավունք ունեցող աշխատակիցների (ծառայողների) շրջանակի սահմանման վերաբերյալ կարգավորում, ինչպես նաև՝ համապատասխան աշխատակցի (ծառայողի) կողմից տեսահսկման համակարգերին մուտք գործելու յուրաքանչյուր դեպքում մուտքային գործողությունների վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառման (լոգավորման), մուտք գործելու նպատակի, մուտք գործող իրավասու աշխատակցի (ծառայողի) տվյալների լրացման պարտադիր պահանջ,

բ. նախագծով համապատասխան աշխատակիցների (ծառայողների) նկատմամբ սահմանել տեսահսկման համակարգով իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պարտականություն և այդ պարտականությունը խախտելու կամ տեղեկությունները չսահմանված նպատակներով օգտագործելու համար պատասխանատվության վերաբերյալ կարգավորում,

գ. տեսահսկման իրականացման կազմակերպչական և ընթացակարգային այլ հարցերը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանելու համար նախագծով նախատեսել համապատասխան լիազորող նորմ,

դ. նախագծում ամրագրել տեսահսկման համակարգերին հասանելիություն տրամադրող մարմինների կողմից տեսագրություններն առնվազն 15 օր պահպանելու վերաբերյալ պարտականություն,

ե. նկատի ունենալ, որ լուծումների լիարժեքություն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանդես կգա համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ, որով կլուծվի նաև հասանելիություն տրամադրող մարմինների աշխատակիցների (ծառայողների)՝ տեսահսկման համակարգով իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պարտականության և այդ պարտականությունը խախտելու կամ տեղեկությունները չսահմանված նպատակներով օգտագործելու համար պատասխանատվության հարցը:

2. «**Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ նախագիծ)՝**

1) Նախագծով սահմանվում է, որ համայնքի ղեկավարը պարտավոր է հասանելիություն տրամադրել համայնքի մուտքերը, ելքերը, համայնքային ենթակայության կազմակերպությունների ու հիմնարկների շինությունները դրսի կողմից տեսանկարահանող, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի կառավարման և (կամ) վերահսկման ներքո գտնվող մյուս բոլոր տեսահսկման համակարգերին: Առաջարկում ենք «համայնքային» բառից առաջ լրացնել «համայնքապետարանի» բառը:

Բացի այդ, հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմնի կառավարման և (կամ) վերահսկման ներքո գտնվող մյուս բոլոր տեսահսկման համակարգերին հասանելիություն տրամադրելն ինքնին ենթադրում է հասանելիության տրամադրում նաև շինությունների ներսի հատվածը տեսանկարահանող տեխնիկական միջոցներին, որը խնդրահարույց է անձնական տվյալների պաշտպանության համաչափության սկզբունքի և մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նախագծի քննարկվող դրույթը խմբագրել և սահմանել շինությունների դրսի կողմից տեղադրված տեսանկարահանող տեխնիկական միջոցներին հասանելիության վերաբերյալ կարգավորում:

2) Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում առկա «տարածքում» բառը փոխարինել «տարածքի տեսանելի հատվածում» բառերով, քանի որ նույն հոդվածում առկա հայտարարության հիման վրա է անձնական տվյալների սուբյեկտը տալիս իր անձնական տվյալները մշակելու, այն է՝ տեսահսկման միջոցով տվյալները հավաքագրելու համաձայնությունը: Նպատակահարմար է ամրագրել, որ հայտարարությունը փակցված լինի հնարավորինս տեսանելի հատվածում՝ հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը, համաձայն որի՝ տվյալների սուբյեկտի համաձայնությունը տրվում է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝

հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բանավոր համաձայնության դեպքում՝ այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալներն օգտագործելու համաձայնության մասին:

3. «**Ավիացիայի մասին**» **օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին**» **օրենքի նախագիծ (այսուհետ՝ նախագիծ)՝**

1) Նախագծի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի միջև կնքված է կոնցեսիոն պայմանագիր, որն ի թիվս այլնի, ենթադրում է կոնցեսիոների իրավունքը՝ օգտագործելու օդանավակայանի տարածքը և գույքը, գործելու որպես օդանավակայանի կառավարիչ՝ սահմանելու և կիրառելու օդանավակայանի շահագործման հետ կապված կանոնակարգերը: Ուստի առաջարկում ենք համապատասխան կարգավորումները դիտարկել կոնցեսիոն պայմանագրի դրույթների համատեքստում: Բացի այդ, հաշվի առնելով, որ բացի ներքին օդային փոխադրումներ իրականացնող օդանավակայաններից, Հայաստանի Հանրապետությունում գործում են միջազգային օդային փոխադրումներ իրականացնող օդանավակայաններ, ուստի առաջարկում ենք օդանավակայանի տեսահսկման համակարգերին հասանելիությունը դիտարկել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային օդային փոխադրումներին վերաբերող միջազգային պայմանագրերի, ինչպես նաև՝ անձնական տվյալների պաշտպանության միջազգային սկզբունքների և կանոնակարգերի տեսանկյունից:

2) Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում «տարածքում» բառը փոխարինել «տարածքի տեսանելի հատվածում» բառերով, քանի որ նույն հոդվածում առկա հայտարարության հիման վրա է անձնական տվյալների սուբյեկտը տալիս իր անձնական տվյալները մշակելու, այն է՝ տեսահսկման միջոցով տվյալները հավաքագրելու համաձայնությունը: Նպատակահարմար է ամրագրել, որ հայտարարությունը փակցված լինի հնարավորինս տեսանելի հատվածում՝ հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-989-20.12.2024-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «իրականացնելիս» բառից հետո լրացնել «, իսկ Լիազոր մարմինը սույն մասի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված դեպքերում,» բառերը եւ կետադրական նշանները.

2) 3-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կետեր.

«4) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական եւ համայնքային ենթակայության կազմակերպություններից, էլեկտրոնային համակարգերի միջոցով (տեսանկարահանող համակարգերով) վերահսկվող ավտոկայանատեղեր ունեցող ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպող մարմնից, օդանավակայաններից եւ պետական սահմանի անցման կետերից պահանջելու եւ ստանալու տեսագրություններ, ունենալու հասանելիություն դրանց տարածքում շինության դրսի կողմից տեղադրված տեսահսկման համակարգերին:

Սույն մասում նշված մարմիններից եւ կազմակերպություններից պահանջվող տեսահսկման համակարգերին հասանելիությունը պետք է ներառի՝

ա. տեսահսկման համակարգին օգտագործողի հնարավորություն,

բ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի դիտման հնարավորություն,

գ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի հոսքի (stream) ստացման եւ պահպանման հնարավորություն,

դ. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի դիտման հնարավորություն,

ե. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի բեռնման, արտահանման հնարավորություն,

զ. առցանց ռեժիմով տեսանկարահանվող գործողությունների՝ լոգավորման շտեմարանների եւ դիտման սարքերի հասանելիության հնարավորություն.

5) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու անձանց նույնականացում բացառապես այն դեպքում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն.

6) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու տվյալների մշակում հետեւյալ նպատակներով.

ա. իրավախախտումների կանխման, հայտնաբերման ու բացահայտման,

բ. հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում արագ արձագանքման,

գ. քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց եւ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերման,

դ. անհետ կորած քաղաքացիների եւ հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման,

ե. հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման.

զ. տրանսպորտային հոսքի կառավարման, ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման,

է. ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության,

ը. օրենքով չարգելված նպատակներով պետական եւ ոչ պետական կազմակերպություններին վճարովի հիմունքներով անհրաժեշտ վերլուծական տվյալների տրամադրման:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«Սույն հոդվածով նախատեսված տեսագրություններ պահանջելը եւ ստանալը, տեսահսկման համակարգերին հասանելիությունը, տեսահսկման համակարգերի միջոցով տվյալների մշակումը եւ տեսահսկման համակարգերի կիրառումը կարող են հետապնդել բացառապես սույն հոդվածով նախատեսված համապատասխան իրավաչափ նպատակներ եւ իրականացվել միայն այն չափով, ինչ չափով դա անհրաժեշտ է եւ համաչափ սույն հոդվածով սահմանված իրավաչափ նպատակին հասնելու համար:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի եւ հարակից օրենքների նախագծերի

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
Հաշվի առնելով ահաբեկչության սպառնալիքը, թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները եւ մարդու կյանքին ու առողջությանը, պետության անվտանգությանը սպառնացող մի շարք այլ հանցագործությունների աճը՝ անհրաժեշտություն է առաջացել առավել լայն հնարավորություններ ստեղծել նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործություններին եւ մյուս հնարավոր իրավախախտումներին հնարավորինս արագ արձագանքելու (այդ թվում դրանք կանխարգելելու (նախականխելու, կանխելու), հայտնաբերելու եւ բացահայտելու) համար:

Ըստ այդմ, մի շարք կրիմինոլոգիական հետազոտությունների արդյունքները փաստում են, որ մարդկանց համար տեսանելի վայրերում նկարահանող սարքերի առկայությունը հանցավորության եւ այլ հակահասարակական վարքագծի դրսեւորման միտումների վրա զգալի կանխարգելիչ ազդեցություն ունեն: Ավելին, սույն նախագծերի փաթեթով սահմանված տեխնիկական միջոցների եւ դրանց ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետեւ՝ Ոստիկանություն) հասանելիության՝ դրանք վերջինիս տեսադաշտում ներառման ապահովումն ու դրանց նկատմամբ ոստիկանության կողմից վերահսկողության հաստատումը, հասարակական անվտանգության ապահովման այլ միջոցների նկատմամբ ունի գործնական մեծ առավելություն, քանի որ այն իրական (ռեալ) հնարավորություն է տալիս Ոստիկանությանը արագ արձագանքելու դրանցով

արձանագրված (ֆիքսված) հանցագործություններին եւ մյուս հնարավոր իրավախախտումներին:

Մինչդեռ, օրինակ, Երեւան քաղաքում ներկայումս, վերոնշյալ ապահովման ու վերահսկողության բացակայության պայմաններում, տեղի ունեցած հանցագործությունների եւ մյուս հնարավոր իրավախախտումների հայտնաբերման ու բացահայտման ընթացքում Ոստիկանությունը շատ հաճախ օգտվում է ավտոկայանատեղերը վերահսկող տեսախցիկներից: Այդ տեսախցիկների տեսագրություններին հետեւելու ու դրանց համապատասխան հասանելիություն ապահովելու համար ամեն անգամ անհրաժեշտ է լինում համակարգը սպասարկող ընկերության աշխատակիցների թույլտվությունն ու ներկայությունը, ինչը բարդացնում է գործընթացը՝ հանգեցնելով ժամանակի անտեղի վատնման, գործընթացի օպերատիվության խաթարման եւ վերջինիս ոչ իրավասու անձանց անհարկի մասնակցության՝ նպաստելով նրանց կողմից համապատասխան տեղեկատվության արտահոսքի ու դրանով պայմանավորված խոչընդոտների առաջացմանը, ինչն իր հերթին անհնարին է դարձնում կամ առնվազն դժվարացնում ու ձգձգում է համապատասխան դեպքերի «տաք հետքերով» հայտնաբերումն ու բացահայտումը: Խնդիրն առավել ընդգծվում է գիշերային ժամերին կամ ոչ աշխատանքնային օրերին տեղի ունեցած հանցագործությունների դեպքում, երբ տեսախցիկները դիտելու համար ոստիկանները ստիպված են լինում սպասել աշխատանքային օրերին եւ ժամերին:

Այսպիսով՝ առաջարկվող նախագծերի փաթեթի ընդունումը հնարավորություն կտա հանցագործությունների եւ մյուս հնարավոր իրավախախտումների կանխարգելման (նախականխման, կանխման) ու դրանց դեմ պայքարի վերջիններիս հայտնաբերման ու բացահայտման կապակցությամբ խնայելու հսկայական ժամանակ, ապահովելու հիշյալ գործընթացների օպերատիվությունը, ինչպես նաեւ խուսափելու նույն գործընթացների կապակցությամբ տարաբնույթ ու տարատեսակ օպերատիվ-հետախուզական ու վարութային-քննչական մեծածավալ միջոցառումներ ու գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունից՝ այդ ընթացքում խնայելով նաեւ հսկայական ժամանակ, մարդկային ռեսուրս եւ ֆինանսանյութական միջոցներ: Նշվածն իր հերթին հնարավորություն կտա բարձրացնել Ոստիկանության գործունեության արդյունավետությունը, լուծել գործնականում ծագած վերոնշյալ եւ մի շարք այլ նույնաբնույթ խնդիրներ, արդիականացնել հասարակական կարգի պահպանության եւ հանցավորության դեմ պայքարի ոլորտները՝ առանց սահմանափակելու անձանց սահմանադրական իրավունքների ապահովման երաշխիքները:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագիծը չի բխում որեւէ ռազմավարական փաստաթղթից:

3. Կարգավորման նպատակը եւ բնույթը

Օրենսդրական նախաձեռնության ընդունման արդյունքում Ոստիկանությունն իրավասու է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական եւ համայնքային ենթակայության կազմակերպություններից ու հիմնարկներից, էլեկտրոնային համակարգերի միջոցով (տեսանկարահանող համակարգերով) վերահսկվող ավտոկայանատեղեր ունեցող ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպող կառույցներից, օդանավակայաններից եւ պետական սահմանի անցման կետերից

պահանջելու եւ ստանալու տեսագրություններ, ունենալու հասանելիություն դրանց տարածքում շինության դրսի կողմից տեղադրված տեսահսկման համակարգերին:

Վերոնշյալ մարմիններից ու կազմակերպություններից պահանջվող տեսահսկման համակարգերին հասանելիությունը պետք է ներառի՝

ա. տեսահսկման համակարգին օգտագործողի հնարավորություն,

բ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի դիտման հնարավորություն,

գ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի հոսքի (stream) ստացման եւ պահպանման հնարավորություն,

դ. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի դիտման հնարավորություն,

ե. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի բեռնման, արտահանման հնարավորություն,

զ. առցանց ռեժիմով տեսանկարահանվող գործողությունների՝ լոգավորման շտեմարանների եւ դիտման սարքերի հասանելիության հնարավորություն:

Բացի այդ, նախագծերի փաթեթի համաձայն՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը հնարավորություն կունենա՝

1) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու անձանց նույնականացում բացառապես այն դեպքում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն.

2) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու տվյալների մշակում հետեւյալ նպատակներով.

ա. Իրավախախտումների կանխարգելման (նախականխման, կանխման), հայտնաբերման ու բացահայտման,

բ. հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում արագ արձագանքման,

գ. քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց եւ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերման,

դ. անհետ կորած քաղաքացիների եւ հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման,

ե. հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման.

3) տեսահսկման համակարգերը կիրառելու նաեւ հետեւյալ նպատակներով.

ա. տրանսպորտային հոսքի կառավարման, ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման,

բ. ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության,

գ. օրենքով չարգելված նպատակներով պետական եւ ոչ պետական կազմակերպություններին վճարովի հիմունքներով անհրաժեշտ վերլուծական տվյալների տրամադրման եւ այլն:

4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների եւ ծախսերի մասով փոփոխություններ չի առաջանա:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք.

Նախագծերը մշակվել են ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հետ համագործակցելով:

6. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում Ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում իրավունք կունենա պահանջել եւ ստանալ վերոգրյալ տեսահսկման համակարգերի տեսագրությունները, ինչպես նաեւ ունենալ հասանելիություն այդ համակարգերին՝ «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով՝ 24/7 ժամանակի ռեժիմով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի եւ հարակից օրենքների նախագծերի

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
Հաշվի առնելով ահաբեկչության սպառնալիքը, թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները եւ մարդու կյանքին ու առողջությանը, պետության անվտանգությանը սպառնացող մի շարք այլ հանցագործությունների աճը՝ անհրաժեշտություն է առաջացել առավել լայն հնարավորություններ ստեղծել նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործություններին եւ մյուս հնարավոր իրավախախտումներին հնարավորինս արագ արձագանքելու (այդ թվում դրանք կանխարգելելու (նախականխելու, կանխելու), հայտնաբերելու եւ բացահայտելու) համար:

Ըստ այդմ, մի շարք կրիմինոլոգիական հետազոտությունների արդյունքները փաստում են, որ մարդկանց համար տեսանելի վայրերում նկարահանող սարքերի առկայությունը հանցավորության եւ այլ հակահասարակական վարքագծի դրսեւորման միտումների վրա զգալի կանխարգելիչ ազդեցություն ունեն: Ավելին, սույն նախագծերի փաթեթով սահմանված տեխնիկական միջոցների եւ դրանց ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետեւ՝ Ոստիկանություն) հասանելիության՝ դրանք վերջինիս

տեսադաշտում ներառման ապահովումն ու դրանց նկատմամբ ոստիկանության կողմից վերահսկողության հաստատումը, հասարակական անվտանգության ապահովման այլ միջոցների նկատմամբ ունի գործնական մեծ առավելություն, քանի որ այն իրական (ռեալ) հնարավորություն է տալիս Ոստիկանությանը արագ արձագանքելու դրանցով արձանագրված (ֆիքսված) հանցագործություններին եւ մյուս հնարավոր իրավախախտումներին:

Մինչդեռ, օրինակ, Երեւան քաղաքում ներկայումս, վերոնշյալ ապահովման ու վերահսկողության բացակայության պայմաններում, տեղի ունեցած հանցագործությունների եւ մյուս հնարավոր իրավախախտումների հայտնաբերման ու բացահայտման ընթացքում Ոստիկանությունը շատ հաճախ օգտվում է ավտոկայանատեղերը վերահսկող տեսախցիկներից: Այդ տեսախցիկների տեսագրություններին հետեւելու ու դրանց համապատասխան հասանելիություն ապահովելու համար ամեն անգամ անհրաժեշտ է լինում համակարգը սպասարկող ընկերության աշխատակիցների թույլտվությունն ու ներկայությունը, ինչը բարդացնում է գործընթացը՝ հանգեցնելով ժամանակի անտեղի վատնման, գործընթացի օպերատիվության խաթարման եւ վերջինիս ոչ իրավասու անձանց անհարկի մասնակցության՝ նպաստելով նրանց կողմից համապատասխան տեղեկատվության արտահոսքի ու դրանով պայմանավորված խոչընդոտների առաջացմանը, ինչն իր հերթին անհնարին է դարձնում կամ առնվազն դժվարացնում ու ձգձգում է համապատասխան դեպքերի «տաք հետքերով» հայտնաբերումն ու բացահայտումը: Խնդիրն առավել ընդգծվում է գիշերային ժամերին կամ ոչ աշխատանքնային օրերին տեղի ունեցած հանցագործությունների դեպքում, երբ տեսախցիկները դիտելու համար ոստիկանները ստիպված են լինում սպասել աշխատանքային օրերին եւ ժամերին:

Այսպիսով՝ առաջարկվող նախագծերի փաթեթի ընդունումը հնարավորություն կտա հանցագործությունների եւ մյուս հնարավոր իրավախախտումների կանխարգելման (նախականխման, կանխման) ու դրանց դեմ պայքարի վերջիններիս հայտնաբերման ու բացահայտման կապակցությամբ խնայելու հսկայական ժամանակ, ապահովելու հիշյալ գործընթացների օպերատիվությունը, ինչպես նաեւ խուսափելու նույն գործընթացների կապակցությամբ տարաբնույթ ու տարատեսակ օպերատիվ-հետախուզական ու վարութային-քննչական մեծածավալ միջոցառումներ ու գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունից՝ այդ ընթացքում խնայելով նաեւ հսկայական ժամանակ, մարդկային ռեսուրս եւ ֆինանսանյութական միջոցներ: Նշվածն իր հերթին հնարավորություն կտա բարձրացնել Ոստիկանության գործունեության արդյունավետությունը, լուծել գործնականում ծագած վերոնշյալ եւ մի շարք այլ նույնաբնույթ խնդիրներ, արդիականացնել հասարակական կարգի պահպանության եւ հանցավորության դեմ պայքարի ոլորտները՝ առանց սահմանափակելու անձանց սահմանադրական իրավունքների ապահովման երաշխիքները:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագիծը չի բխում որեւէ ռազմավարական փաստաթղթից:

3. Կարգավորման նպատակը եւ բնույթը

Օրենսդրական նախաձեռնության ընդունման արդյունքում Ոստիկանությունն իրավասու է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական եւ համայնքային

ենթակայության կազմակերպություններից ու հիմնարկներից, էլեկտրոնային համակարգերի միջոցով (տեսանկարահանող համակարգերով) վերահսկվող ավտոկայանատեղեր ունեցող ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպող կառույցներից, օդանավակայաններից եւ պետական սահմանի անցման կետերից պահանջելու եւ ստանալու տեսագրություններ, ունենալու հասանելիություն դրանց տարածքում շինության դրսի կողմից տեղադրված տեսահսկման համակարգերին:

Վերոնշյալ մարմիններից ու կազմակերպություններից պահանջվող տեսահսկման համակարգերին հասանելիությունը պետք է ներառի՝

ա. տեսահսկման համակարգին օգտագործողի հնարավորություն,

բ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի դիտման հնարավորություն,

գ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի հոսքի (stream) ստացման եւ պահպանման հնարավորություն,

դ. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի դիտման հնարավորություն,

ե. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի բեռնման, արտահանման հնարավորություն,

զ. առցանց ռեժիմով տեսանկարահանվող գործողությունների՝ լոգավորման շտեմարանների եւ դիտման սարքերի հասանելիության հնարավորություն:

Բացի այդ, նախագծերի փաթեթի համաձայն՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը հնարավորություն կունենա՝

1) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու անձանց նույնականացում բացառապես այն դեպքում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն.

2) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու տվյալների մշակում հետեւյալ նպատակներով.

ա. Իրավախախտումների կանխարգելման (նախականխման, կանխման), հայտնաբերման ու բացահայտման,

բ. հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում արագ արձագանքման,

գ. քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց եւ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերման,

դ. անհետ կորած քաղաքացիների եւ հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման,

ե. հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման.

3) տեսահսկման համակարգերը կիրառելու նաեւ հետեւյալ նպատակներով.

ա. տրանսպորտային հոսքի կառավարման, ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման,

բ. ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության,

գ. օրենքով չարգելված նպատակներով պետական եւ ոչ պետական կազմակերպություններին վճարովի հիմունքներով անհրաժեշտ վերլուծական տվյալների տրամադրման եւ այլն:

4. **Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունները**

Նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների եւ ծախսերի մասով փոփոխություններ չի առաջանա:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք.

Նախագծերը մշակվել են ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հետ համագործակցելով:

6. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում Ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում իրավունք կունենա պահանջել եւ ստանալ վերոգրյալ տեսահսկման համակարգերի տեսագրությունները, ինչպես նաեւ ունենալ հասանելիություն այդ համակարգերին՝ «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով՝ 24/7 ժամանակի ռեժիմով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-989[1]-20.12.2024-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Համայնքի ղեկավարը պարտավոր է ապահովել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը 24/7 ժամանակի ռեժիմով հասանելիության տրամադրումը համայնքի մուտքերը եւ ելքերը տեսանկարահանող, համայնքային ենթակայության կազմակերպությունների ու հիմնարկների շինությունները դրսի կողմից տեսանկարահանող, ինչպես նաեւ՝ տվյալ տեղական ինքնակառավարման մարմնի կառավարման եւ (կամ) վերահսկման ներքո գտնվող մյուս բոլոր տեսահսկման համակարգերին: Տեսահսկվող տարածքում պետք է փակցված լինեն «Տարածքը տեսահսկվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից» բովանդակությամբ հայտարարություններ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-989[2]-20.12.2024-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի եւ վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-221-Ն օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 4-րդ մասով.

«4. Էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող համակարգերով) վերահսկվող ավտոկայանատեղեր ունեցող ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպող մարմինը պարտավոր է իր էլեկտրոնային համակարգերին առցանց ռեժիմով (իրական ժամանակում) հետեւելու եւ դրանց արխիվային տեսագրություններից օգտվելու ամբողջական հասանելիություն տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից նշված տեսանկարահանող սարքերով սույն օրենքի կարգավորման շրջանակներից դուրս իրավախախտումներ արձանագրվելու դեպքում դրանց վերաբերյալ իրականացված վարչական վարույթների արդյունքում կայացված որոշումների հիման վրա իրավախախտումը կատարած անձանցից գանձված գումարի 25%-ը ենթակա է փոխանցման տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի բյուջե:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-989³-20.12.2024-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավիացիայի մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-81-Ն օրենքի 52-րդ հոդվածի 7-րդ մասի՝

1) 5-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 5-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) պարտավոր են ապահովել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանն 24/7 ժամանակի ռեժիմով հասանելիության տրամադրումը օդանավակայանների մուտքերն ու ելքերը տեսանկարահանող տեսահսկման համակարգերին: Տեսահսկվող տարածքում պետք է փակցված լինեն «Տարածքը տեսահսկվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից» բովանդակությամբ հայտարարություններ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-989⁴-20.12.2024-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 187.1-ին հոդվածով.

«Հոդված 187.1 Տեսահսկման համակարգերին հասանելիություն տրամադրելու կամ օրենքով նախատեսված տեսահսկման համակարգերին հասանելիությունը ներառող պահանջները խախտելը

1. Տեսահսկման համակարգերին հասանելիություն ապահովելու կամ օրենքով նախատեսված տեսահսկման համակարգերին հասանելիությունը ներառող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կրկին կատարվել է վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սակայն ոչ շուտ, քան վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամիս անց՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում «(եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում),» բառերից եւ կետադրական նշանից հետո լրացնել «187.1-ին,» բառը եւ կետադրական նշանը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 87 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ)

ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատա- ռելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (Պ-989-20.12.2024-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

31.01.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ